

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱԿՈՒԲ Դ. ՋՈՒՂԱՅԵՑԻ
ՇԻՆԱՐԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այս խիստ դժնդակ շրջանին մէջ էջմիածնի կաթողիկոսական Աթոռը կը բարձրանայ Յակոբ Զուղայեցի, որդի Թասալուի (1), երբ Պարսից վրայ կը թագաւորէր Շահ Աբաս Փոքր, և Օսմանցիներու Սուլթանն էր Մուհամմէտ Դ. (2):

Ան կը յաջորդէ Փիլիպպոս Աղբակեցիի († 25 Մարտ 1655). կաթողիկոս կ'օծուի նոյն տարուան Ապրիլ 8ին, Ծաղկազարդի կիրակին: Էջմիածնի միաբան եպիսկոպոսներն ու վարդապետները զինք կը կաթողիկոսացնեն նկատի առնելով վարչական կարողութիւնը, զոր ան ցոյց տուած էր իրրև տեղապահ, Փիլիպպոս կաթողիկոսի երկամեայ բացակայութեան միջոցին

(1) Զամբո ի Սիմեոնե կաթողիկոսէ, վաղաբաւաս 1873, էջ 127. Առաքել Դաւրիժեցի, Անդ 266:

(2) Զամբո էջ 23: